



ԴՐԱԿՈՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏՎԿԵ ՀԱՆԴԵՍ Ս. ԷՃՄԻԱՅՆՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՄՐԲՈՑ ՎԵՐԴԱՆԱՑ ԱՆՄԱՀ ՀԻՃՄՏՎԿԻՆ

Հայրվարի 25-ի վաղ առավոտյան,
Միածնաէց Մայր Տաճարում,
աղոթքով ու պատարագով նշելուց
հետո Վարդանանց պատերազմի
1.036 հաճատակների անմահ հիշատակը,
երեկոյան ժամը 8-ին էջմիածնի միաբանու-
թյան եպիսկոպոս, վարդապետ, քահանա և
սարկավագ անդամները, Հոգևոր Ճեմարանի
սաները, ուսուցչական կազմն ու աշխարհա-
կան հանդիսականների մի կոկիկ բազմու-
թյուն՝ հավաքվել էին Հոգևոր Ճեմարանի
գահինը, Հայրենիքի ու հայ ժողովրդի ազա-
տության համար, 1.500 տարի առաջ, Ավա-
րարի դաշտում զոհաբերված Վարդանանց
հերոսների սրբազն գործը մի անգամ ևս
պանծացներու դրական-գեղարվեստական
հանդիսով, որը կազմակերպվել էր Հոգևոր
Ճեմարանի վերատեսչության կողմից:

Նախագահության սեղանի շորջը զգալի
էր բացակայությունը մեծ Հայրապետի՝ նո-
րին Ս. Օծություն Տ. Տ. Գեղորգ Զ. Վեհափառ
կաթողիկոսի, որ հիվանդության պատճա-
ռով չի կարողացել մասնակցել և հո-
գին անշուշտ հետևում է գիշերվա այս
պահին հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու
պաշտպանության ի խնդիր մարտիրոսացած
հերոսների ի հարգանս կատարվող այս հան-
դեսին:

Ներկա գտնվող հյուրերի մեջ է ժամանա-
կակից հայ դրականության մեծանուն ներ-
կայացուցիչ՝ Ավետիք հսահակյանը — Վար-

պիտ հայ բանաստեղծության: Նրա հետ միա-
սին, նախագահության սեղանի առաջ՝ տեղ
էին գրավել նաև գերաշնորհ Տ. Սահակ
նախակոպոս Տեր-Հովհաննիսյանը, Շողեշնորհ
Տ. Գեղորգ վարդապետ Վաթյանը և Հոգևոր
Ճեմարանի վերատեսուց տիար Մինաս Մի-
նասյանը:

Ճեմարանի երգիշ խմբի կողմից խանդա-
վառորեն և հոգոնկայս երգված Սովորական
Հայաստանի Հիմնից հետո, վերատեսուց
տիար Մինասյանը իր բացման խոսքում
ցայտեցրեց բնազդական կոխվների և գի-
տակցական գոյարմարտերի տարբերությունը,
թվեց թել Հակայի բռնակալության դեմ Հայկ
Նահապետի, Շամիրամի դեմ՝ Արա Գեղեցի-
կի, հոռմեացիների դեմ՝ Տիգրան Մեծի,
ավելի ուշ պարսկական, բյուզանդական,
արաբական, սեղուկյան ու տաճկական
բռնակալ տիրապետությունների դեմ՝ ամբողջ
հայ ժողովրդի մղած ազատամարտերը, նշեց
անունները հերոսական հայաբաղաների՝
Զեյթունի, Սասունի, Վանի, Եղիսիայի, Մու-
սաւ-Ղետան (Զերել-Մուսա) և Հաջընի, որտե-
ղերի բնիկ հայերը, գեռևս մոտիկ անցյա-
լում, անօրինակ բաջությամբ են կովել ան-
համեմատորեն գերազանց թվով շարդարար-
ների դեմ և հաճախ հաղթել նրանց, ընդգծեց
Հայրենական Մեծ պատերազմի ընթացքին
կարմիրբանակային հայ զորքերի և զորա-
վարների սխրագործությունները հիտերյան
հորդաների դեմ և ի վերջո հարգանք ընծա-
յեց հայ ժողովրդի և Հայաստանի արարվա

փայլում իրականությանը — այն է՝ հզոր Սովորական Միության 16 ռեսպուբլիկաների միջև հավասարազոր ռեսպուբլիկա լինելու փառքը — ապահովելու համար, ազատության արյունոտ ճանապարհի վրա գիտակցարար զոհաբերված հայտնի թե անհայտ հերոս նահատակների հիշատակին:

Ներսես Շնորհալի հայրապետի Վարդանանց հիշատակին ձոնած «Նորահրաշ պահաւոր» սբանչելի շարականից հետո, խոսք առաջ Շեմարանի դասախոսներից Արթուր Հատիտյանը:

Դասախոս Հատիտյանի ծափահարված բանախոսությունից բացի, գեղեցիկ շարադրություններ կարդացին Սարգիս սարկավագ Սարգսյանն ու Ռուգեն սարկավագ Մարտիրոսյանը: Սարգիս սարկավագը, «Ժողովրդի դերը Վարդանանց պատերազմին» թեմայով իր ուսումնասիրության մեջ նշելով այն հանգամանքը, թե այդ հերոսամարտը մի համաժողովրդական բողոք էր անազատության դեմ, մի տարբերային ապատամբություն՝ բննակալության դեմ, ցայտեցրել էր այն կարեր դերը, որը կատարել էր հայ ժողովրդը, սկսյալ փափկասում տիկիններից մինչև հասարակ շինականն ու հոգևորականը, ճգնաժամային այդ տարիներին ի հարտ բերելով նկարագրի մեծությունը: Իսկ Ռուգեն սարկավագը, «Լարդանը և Վարդանանքի հայություն» ուսումնասիրությամբ հետաքրքիր աշխատանք էր կատարել, ցույց տալով, թե Վարդանանց թեմատիկան ի՞նչ տիպականացում, ի՞նչ գույն ու երանգ է ստացել տարրեր ժամանակաշրջաններում, տարրեր հեղինակների կողմից, սկսյալ 5-րդ դարի ոսկեծղի եղիշեկից, 12-րդ դարի ներսես Շնորհալի կաթողիկոսից, մինչև 19-րդ դարի Ղեորգ Ալիշանը, Ռափայել Պատկանյանը, Գարեգին հպիսկոպոս Սրվանձտյանը, Պետրոս Դուլյանը, Մկրտիչ Պեղկթաշլյանը, Յելեկյանը և մինչև ժամանակակից Հովհաննես Հովհաննիսյանը, Վահան Թեքեյանը, Դերենիկ Դեմիրճյանը ու Նաիրի Զարյանը, որի հետևյալ տողերը մնում են անջնջելի պատգամ՝ գալիք հայ սերունդների համար.

«Արյան մառախոսվից ելում է Վարդանի պատկերը սեղ եվ ազը մեզ մեկնած՝ կրկին գոշում է. — Հայ բաջեր, հառաջ...»:

Հոգեոր ծեմարանի սան Հ. Դանիելյանը զգացմանքով կարդաց Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպից մի հատված: Ընթերցման դաշնամուկով ընկերակցում էր հանդեսի երաժշտական բաժնի զեկավար կոմպոզիտոր Հրանտ Գերդիյանը: Եղիշեկի «Տիկնայք փափկասում» հայոց աշխարհին» հատվածը կարդաց ուսանող Ա. Սանթուրյանը, իսկ Բաֆու «Դավիթ-Բեկ» վեպից մի հատված կարդաց ուսանող Հ. Կարաօղլանյանը: Արևմտահայ բանաստեղծ Վ. Թերենյանի «Խորհուրդ» կատարեցին Հայոց Վարդանանց»ի արտահայտիչ ընթերցումը կատարեցին Հ. Դանիելյանը և ուսանող ընկերները: Իսկ ինքնագիր բանաստեղծություններ կարդացին Փայլակ սարկավագ Այնթարյանը («Իմ ծողովրդի ներսամարտը») և Վաշգան Հովհաննիսյանը («Վարդանանք հիշատակին»): Երկարատև ծափահարության արժանացավ բանաստեղծ Նաիրի Զարյանի «Զայն նայենական» քերթվածը, արտասանված ուսանող հշիսան Մելքոնյանի կողմից: Հանդիսականները հաճուքով ունկնդրեցին նաև բացի «Քամ, փորտան» և «Գոլդի բնար» խմբերդներից, Ժ. Սեքենյանի երգած «Ոմ Հայենյաց նոզի Վարդան», «Ունց. ամպերը...» և «Ուտենին» (Ավետիք Խաչակրյանի) մեներգները, ինչպես նաև Հակոբ քահանա Հակոբյանի երգած «Միփանա բաջեր»ը և Հոգեոր ծեմարանի սան Արտաշես Բալաբանյանի դաշնամուկի վրա նվազած ինքնաստեղծ «Քայլերգը»:

Այսքան ճոխ հայտագրի կանոնավոր ու անթերի կատարման համար շնորհավորելի են և՝ Հոգեոր ծեմարանի վերատեսչությունը, և՝ հանդեսին մասնակցողները, և՝ գեղարվեստական բաժնի զեկավար իդուատիոն սարկավագ Մարտիրյանը:



Հավարտ հանդեսի, ծեմարանի վերնահարկի դահլիճում, վերատեսչության կողմից պատրաստված թեյասեղանի շուրջ, կրկին առիթ ստեղծվեց վայելելու ընկերակցությունը հայ բանաստեղծության Վարդանեատի: Ներկաների անունից վերատեսության տիար Մինասյանի խնդրանքով թեյասեղանի նախագահությունը վարեց Վարդեությունը:

լուց հետո, թե Վարդանանց հիշատակը սիրելի է եղեւ յուրաքանչյուր հայի համար ամեն տեղ և ամեն ժամանակ, արևշատություն մաղթեց ազգընտիր Հայրապետ նորին Ս. Օծովյուն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսին։ Ապա Վարպետը խոսքը տվեց վերատեսուշ տիար Մինասյանին, որ ներկաներին հավաստիացրեց, թե Վեհափառ Հայրապետը, թեև մարմնով բացակա, բայց հոգով ու սրտով ներկա էր այս հանդիսության ու կարդաց Վարդանանց և Ղևոնդյանց 1500-ամյակի առթիվ (1950 թ.) գրված կոնդակից երկու հատված, ներկաների հիշողության մեջ վերազարթեցնելու համար այն, թե Հայրենասեր Հայրապետը ինչպե՞ս է բնորոշում Ավարայրը։

Ահա՝ այդ հատվածները։

«Ավարայրը հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհագույն ու պահճակի բարձունքն է հանդիսանում, ներուական արտահայտությունը Հայ Ազգի բարոյա-

կան բարձր նկարագրի՝ հայրենասիրության ու ազգասիրության, եկեղեցական ուխտապահության, անձնութաց հերոսության, նոգեոր մշակույրի, նվիրվածության և մարտական կորովի»։

«Ավարայրի հերոսամարտը հոգեզմայլանեասանելի բարձունքն էր ազատագրական մաքանման։— անա թե ինչո՞ւ հանդել է, կա և կմնա առնավետ ազգապանձեզը Հայոց պատմության։ հոգեզմայլ մի էզ, որ դարեւ անընդհատ ոգեշնչել և մսիրարել է հայազն սերուղեներին և ազգային-բաղաբանական առաքինության ուղիներն է պատգամել Հայրենիքին, Ազգին և Եկեղեցուն»։

Կարճ ուղերձներ արին նաև Ֆ. Բոռչանյանը, Հ. Արամյանը, Սահակ սրբազնը, Գեորգ Վարդապետը և ուրիշներ, առողջություն և երկար կյանք մաղթելով Վեհափառ Հայրապետին։

ԹՂԹԱԿԻՒՅ

